

ԿԱՐԾԻՔ

**Վահե Սարգսի Սարգսյանի պատմական գիտությունների թեկնածուի գիտական
աստիճանի հայցման «Վանի թագավորության պատմության հիմնահարցերը Կառլ
Ֆրիդրիխ Լեման-Հաուպտի աշխատություններում (Ք.Ա. XIII-VI դդ.)» խորագրով
ատենախոսության վերաբերյալ**

Հայ ժողովրդի բարեկամ, փորձառու արևելագետ, հնագետ ու պատմաբան Կարլ
Ֆրիդրիխ Լեման-Հաուպտի երկարամյա արդյունավետ գիտական գործունեության
ընթացքում ստեղծված, Վանի թագավորության (Ուրարտու) պատմությանն ու մշակույթին
առնչվող, ծավալուն ժառանգությունն ամբողջապես և պատշաճ չի արժևորվել: Առ այսօր այդ
խնդիրներին վերաբերող նրա աշխատանքները չեն թարգմանվել հայերեն, իսկ դրանց մասին
XX դ. ողջ ընթացքում և XXI դ. սկզբին տարբեր ծավալների ոչ ամբողջական տեղեկություններ
և մասնակի վերլուծություններ տեղ են գտել Վանի թագավորության հիմնահարցերով զբաղվող
մասնագետների (Ն. Արոնց, Բ. Պիտրովսկի, Գ. Մելիքիշվիլի, Ն. Հարությունյան, Մ. Մավվինի,
Ե. Գրեկյան և այլք) աշխատանքներում:

Ըստ այդմ, Վահե Սարգսի Սարգսյանի սույն ատենախոսությունն այդ բացը զգալի
չափով լրացնելու կարևոր գիտական ձեռնարկումն է: Աշխատանքը բաղկացած է
ներածությունից, 3 գլուխներից, եզրակացություններից և օգտագործած սկզբնաղբյուրների ու
գրականության ցանկերից: Ողջ ատենախոսության ծավալը՝ A4 ֆորմատի 176 էջ է:

Ներածության մեջ (էջ 3-14) մանրամասը ներկայացված են խնդրո առարկա նյութի
աղբյուրագիտական հիմքն ու ուսումնասիրվածության աստիճանը, սույն հետազոտության
նպատակն ու խնդիրները, նրա ժամանակագրական սահմանները, կիրառված
մեթոդաբանությունը, գիտական նորույթն ու կիրառական նշանակությունը: Ըստ այդմ, ի մի են
բերված և հանգամանորեն ներկայացված Վանի թագավորությանը վերաբերող Կ. Ֆ. Լեման-
Հաուպտի աշխատանքների անփոփ բովանդակությունն ու եզրահանգումները, դրանց
պահպանած արդի գիտական նշանակությունը, որոշ դրույթների վերաիմաստավորման ու
վերաշարադրման հնարավորությունները, խնդրո առարկա նյութերի ժամանակային
միջակայքն ու դրանց թվագրումների արդի իրական սահմանները և այլն: Ատենախոսը նշում
է, որ Կ. Ֆ. Լեման-Հաուպտի Վանի թագավորությանը (Ուրարտու) վերաբերող գիտական
տասնյակ հոդվածները լույս են տեսել 1892-1938 թթ. ընդգրկող ժամանակահատվածում (էջ 3)

և, որքան էլ զարմանալի է, առ այսօր հայ մասնագիտական հանրությանը Կ. Ֆ. Լեման-Հաուպտն առավելապես հայտնի է Օսմանյան կայսրության արևելյան վիլայեթներում Վ. Բելքի հետ իրականացրած ճանապարհորդության և դրա արդյունք հանդիսացող «Հայաստանը հնում և այժմ» երկհատոր սովորածավալ ուսումնասիրության հրատարակմամբ: Ատենախոսք ներածության մեջ մանրամասը քննարկել է այդ ուսումնասիրության երկու հատորները և արժևորել որպես սկզբնաղբյուրային գործ, հաշվի առնելով այն հանգամանքը, որ դրանցում ուղեգրության ձևով տրված փաստերն այսօր ներկայանցում են հին ճանապարհների, խաչմերուկների ու տարատեսակ կառույցների ու դրանց վրա պահպանված սեպագիր արձանագրությունների մանրամասներ, որոնց մի մասն արդեն գոյություն չունեն և սկզբնաղբյուրային կարգավիճակ են ստացել:

Ներածության վերջում հեղինակն անդրադարձել է հայ և օտարազգի այն անվանի մասնագետներին, ովքեր անդրադարձել են Հայկական լեռնաշխարհի մ.թ.ա. XIII-VI դդ. պատմամշակութային իրողություններին և դրանց մեկնաբանման ընթացքում այս կամ այն չափով հենվել նաև Կ. Ֆ. Լեման-Հաուպտի տվյալների ու մեկնաբանությունների վրա:

Ատենախոսության առաջին գլուխը (էջ 15-54) կրում է «Ասորեստանի արշավանքները Հայկական լեռնաշխարհ ք.ա. XIII-IX դդ: Կենտրոնացված պետության ձևավորումը» վերնագիրը և բաղկացած է 3 ենթագլուխներից: Դրանցում ատենախոսության հեղինակն անդրադառնում է Ուրուատրի և Ուրարտու երկրանուններին, որոնց նախնական շրջանում Կ. Ֆ. Լեման-Հաուպտը համարում էր տարբեր պետական կազմավորումներ, ապա բերում ուրարտագետի ավելի ուշ արված եզրահանգումը, ըստ որի վերջիններս նույնական են: Ավելին, Կ. Ֆ. Լեման-Հաուպտը Ուրարտուի հետ է կապում նաև Հերոդոտոսի մոտ հիշատակվող ալարոդներին, ինչպես նաև Աստվածաշնչյան Արարատի թագավորության և Արարատ լեռան անունները: Այս համատեքստում անդրադառնալով Աշուրնաձիրալի տեքստում հիշատակվող Նիժիր լեռանն ու լուլլու ցեղին, Լեման-Հաուպտը փորձում է որոշակի գուգահեռներ տեսնել աստվածաշնչյան Արարատի հետ: Սրանք առաջին անգամ գիտական շրջանառության մեջ դրված վարկածներ են, որոնք այսօր էլ քննարկվում և, որոշ առումներով, ընդունելի են ժամանակակից մասնագետների կողմից: Այս առումով ուրարտագետի միակ կասկածն այն է, որ Ուրուատրի անվանումը նախապես վերաբերել է Վանա լճից հարավ (թերևս՝ նաև հարավարևելք) ընկած տարածքներին, ապա ավելի ուշ դրանց է միացվել նաև լճի ավազանը՝ հատկապես նրա հարավային և արևելյան ափամերձ հատվածները: Ընդհանուր

առմամբ այս ենթագլխում քննարկվում են նաև գերմանացի ուրարտագետի հետազոտություններն Ուրուարտի-Ուրարտու և Նաիրի երկրների զբաղեցրած դիրքի ու տեղորոշումների վերաբերյալ, որոնք այսօր էլ, ընդհանուր առմամբ, չեն կորցրել իրենց տրամաբանական հենքն ու պատմագիտական արժեքը:

Ատենախոսության այս գլխի երկրորդ ենթագլխում հիմնականում անդրադարձ է կատարվել Հայկական լեռնաշխարհից հայտնաբերված տարաբնույթ ու տարածամանակյա ասուրերեն արձանագրություններին և դրանց համատեքստում քննարկվել են Ասորեստանի արքաների դեպի տարածաշրջան կատարած արշավանքների Լեման-Հաուպտյան մեկնաբանությունները:

Նույն գլխի երրորդ ենթագլխում հիմնականում քննության են առնված Ուրարտու կառավարիչ Արամե/ուի և Ասորեստանի տիրակալ Սալմանասար III-ի բարդ փոխհարաբերությունները, վերջինիս դեպի Ուրարտու կատարած արշավանքների երթուղին, երկրի արքայական քաղաքներ Արծաշկուի և Սուգունիայի տեղադրությունը, ինչպես նաև Վանի թագավորության (Ուրարտու) կազմավորմանն առնչվող խնդիրների Կ. Ֆ. Լեման-Հաուպտի տեսլականն ու դրա գիտական հիմնավորումները:

Ատենախոսության երկրորդ գլուխը կրում է «Բիայնիլի-Ուրարտուի վերելքը» վերնագիրը և ստորաբաժանված է 3 ենթագլուխների: Այս գլխի առաջին ենթագլխում քննության են առնված Կ. Ֆ. Լեման-Հաուպտի մեկնաբանումները Վանի թագավորությունում Իշպուինի արքայի միանձնյա և Մենուայի հետ համատեղ կառավարման ժամանակաշրջանի վերաբերյալ և դրանց արդի վերաիմաստավորումներն ու հիմնավորումները: Մասնավորապես գերմանացի հետազոտողի այն թեզը, թե Իշպուինիի օրոք է միայն Տուշպան դարձել Ուրարտուի մայրաքաղաք, այնքան էլ իրատեսական չէ հայտնաբերված և՛ հին, և՛ նոր արձանագրությունների և դրանց տեղեկատվության համատեքստում, ինչի մասին իրավացիորեն նշում է ատենախոսը: Անշուշտ Վանա լճի այդ հատվածում և հատկապես Տուշպա մայրաքաղաքից ոչ հեռու, Իշպուինիի կառուցած տաճարական և տնտեսական շինությունները վկայում են այդ արքայի բուռն գործունեության մասին, սակայն դրանք դեռևս ոչ բավարար են նրան վերագրելու Տուշպան մայրաքաղաք դարձնելու մենաշնորհը: Այլ խնդիր է, որ Իշպուինին իրոք զբաղվել է Վանա լճի հարավային և հարավարևմտյան շրջանները բարեկարգելու, պաշտպանական և ոռոգման համակարգեր ստեղծելու խնդիրներով և որդու՝ Մենուայի հետ համատեղ ձեռնարկել է հաջող արշավանքներ ընդդեմ Ասորեստանի, ինչի

արդյունքում էլ Վանի թագավորությունը (Ուրարտու) վերածվել է տարածաշրջանային ռազմաքաղաքական լուրջ խնդիրներ առաջադրող և դրանք հաջողությամբ լուծող հզոր տերության: Հատկանշական են Կ. Ֆ. Լեման-Հաուպտի մեկնությունները նաև Վանի թագավորության հզոր արքաներ Արգիշթի I-ի և Սարգուրի II-ի սեպագիր տարեգրությունների, ինչպես նաև Լճաշենի, Մարմաշենի (նախկին՝ Ղանլիջա) և Սպանդարյանի (նախկին՝ Կուլիջան) արձանագրությունների վերաբերյալ և ատենախոսի հավասարակշռված ու հիմնավոր անդրադարձը դրանց:

Ատենախոսության երրորդ գլուխը կրում է «Վանի թագավորության թուլացումը և անկումը: Հայաստանը ք. ա. VI դարում» խորագիրը (էջ 102-119) և ստորաբաժանված է 2 ենթագլուխների: Այստեղ ատենախոսը կարողացել է ըստ արժանվույն ի մի բերել և ներկայացնել Կ. Ֆ. Լեման-Հաուպտի մոտեցումները Ռուսա I-ի կառավարման շրջանի, Վանի թագավորության (Ուրարտու) և Ասորեստանի միջև ռազմաքաղաքական բարդ ու բազմաշերտ փոխհարաբերությունների, մասնավորապես՝ մերձուրմիական շրջանների նկատմամբ վերահսկողություն հաստատելու երկուստեք փորձերի և, վերջապես, Սարգոն II-ի դեպի Ուրարտու և Մուծածիր կազմակերպած կործանարար արշավանքի մասին: Գերմանացի հետազոտողի նշված մեկնաբանությունները հնարավորինս համալրված են արդի ուրարտագիտության մեջ ընդունված հավաստի եզրահանգումներով ու դրանց հիմնավոր բացատրություններով: Այս գլխում նաև անդրադարձ է կատարվել Ահդրկովկասում և Փոքր Ասիայում խնդրո առարկա ժամանակահատվածում կարևոր նշանակություն ձեռք բերած «կիմմերական գործոնին», Վանի թագավորության (Ուրարտու) անկման տեսլականին, արմենների այսպես կոչված «գաղթի» լեման-հաուպտյան ընկալումներին և դրանց բացատրությանն ու վերամեկնաբանմանը:

Այսպիսով, ատենախոսության ներածության մեջ և երեք գլուխներում շարադրված ծավալուն նյութերն ի մի են բերված «Եզրակացություններ» խորագրով վերջաբանում (էջ 143-149): Նրանում առանձնացված են 8 հիմնական ամփոփիչ կետեր, որոնցում շարադրված են գերմանացի անվանի ուրարտագետ Կ. Ֆ. Լեման-Հաուպտի շուրջ երեք տասնյակ աշխատանքների հիման վրա հավաքված ու համակարգված Վանի թագավորությանը վերաբերող նյութերը, դրանց արդի մեկնաբանությաններն ու վերախմաստավորումները:

Արդարև իրականացվել է վիթխարի մանրագին գիտագործնական ու գիտահետազոտական աշխատանք, որ միանշանակ արժանի է դրվատանքի: Միևնույն

Ժամանակ անհրաժեշտ ենք համարում ընդգծել նրանում առաջադրված ու քննարկված այն էական, առանցքային հիմնահարցերն ու դրանց արդյունքները, որ այսօր կարևոր դեր ու նշանակություն ունեն Ուրարտագիտության հետազոտարկային կենտրոնի համար: Մեր կարծիքով դրանք հետևյալներն են:

1. Աշխատանքը շարադրված է ընտիր հայերենով, ըստ էության առանց ուղղագրական, կետադրական ու բովանդական սխալների, ինչն այսօր, ցավոք, միշտ չէ, որ հանդիպում է նման ատենախոսություններում:

2. Շարադրված գիտական նյութերի մի ստվար մասն ամբողջությամբ առաջին անգամ է հասնում դառնում ոլորտի մասնագետներին և, այդ առումով, ըստ էության, ձեռք է բերում սկզբնաղբյուրի նշանակություն:

3. Գերմանացի գիտնականի մեկնաբանությունները քննարկված են ստվարածավալ մասնագիտական գրականության հենքի վրա, ինչը թույլ է տալիս հետևել ու արձանագրել Վանի թագավորության ամենատարբեր գործընթացների մասին նրա ընկալումները մեկ հարյուրամյակ առաջ և, ժամանակի ընթացքում ավելացած տեղեկատվության հիման վրա, փաստագրել դրանց հաստատուն մնալու և/կամ վերաարժևորվելու դինամիկան:

4. Ատենախոսության մեջ օգտագործվել է 381 անուն մասնագիտական գրականություն, որի բացարձակ մեծամասնությունը՝ 297 գրքեր ու հոդվածներ (ըստ որում դրանցից 28-ը Կ.Ֆ. Լեման-Հաուպտի հեղինակածները), արտերկի հրատարակություններ են անգլերեն, ֆրանսերեն, գերմաներեն, ռուսերեն և իտալերեն լեզուներով: Սա խոսում է ատենախոսի մասնագիտական խորագիտակության, ոլորտին անհրաժեշտ մակարդակով ծանոթ լինելուն, հիմնախնդիրները տեղեկատվական լայն համապատկերի վրա քննարկելու կարողության և մասնագիտական բարեխղճության մասին:

5. Հատկապես ուզում եմ ընդգծել աշխատանքի համապատասխան հավաճներում հայ միջնադարյան պատմիչների գործերի համապատասխան հատվածների, հայկական հինավուրց առասպելների ու ավանդազրույցների տեղին ու նպատակային օգտագործումը, ինչ ավելի բովանդակալից ու հարուստ է դարձրել շարադրանքը:

6. Ուզում եմ անդրադառնալ նաև ատենախոսի գիտական ղեկավարի՝ պ.գ.թ. Ռուսլան Յականյանի կարևորագույն դերին, քանի որ առանց վերջինիս ակտիվ ու նպատակային աջակցության դժվար թե բազմաթիվ աստուրերեն տեքստեր, Ասորեստանի նոր թագավորության տարաբնույթ գործընթացների տեղին ու պատշաճ մեկնաբանություններ

աշխատության մեջ ներկայացված կլինեն այդ աստիճան արհեստավարժ, տեղին, հավաստի ու հիմնավորված:

7. Գտնում եմ, որ կատարվել է ոլորտին վերաբերող գիտահավաքչական ու գիտավերլուծական եզակի աշխատանք, որն անպայման (և հնարավորինս արագ) արժանի է հրատարակության:

Այս ամենով հանդերձ, Վահե Սարգսյանից անհամեմատ ավելի քիչ ծանոթ լինելով Կ. Ֆ. Լեման-Հաուպտի գիտական ժառանգությանը, բայց, միևնույն ժամանակ, ընդունված կարգի համաձայն, հավատարիմ մնալով նման գիտական կարծիքներից ակնկալվող քննադատական բաղադրիչի առկայությանը, կցանկանայի ներկայացնել մի քանի առաջարկներ, որոնց ընդունման պարագայում, մեր կարծիքով, սույն գործը կներկայանար առավել կատարյալ և մասնագիտական առումով շահեկան:

1. Ատենախոսն աշխատանքի 4-րդ էջում նշում է, որ Կ. Ֆ. Լեման-Հաուպտի Ռուսախինիլիում կատարած պեղումներից հայտնաբերված գտածոներին անհրաժեշտ մակարդակով ծանոթ է, սակայն ատենախոսության պահանջներից ելնելով դրանց չի անդրադառնում: Մնուշտ դա այդպես է, սակայն հաշվի առնելով այն հանգամանքը, որ հայտնաբերված նյութերում բավական շատ են իշխանության խորհրդանշանները, կնիքներն ու դրանց արտատպությունները, տարբեր նյութերից պատրաստված արձանիկները և այլն, որոնք նաև կոնկրետ քաղաքական, առևտրական, տնտեսական և մշակութային կապեր են մատնանշում, թերևս, այդ տեսանկյունից կարելի էր շատ հպանցիկ անդրադարձ կատարվեր նաև վերոհիշյալ արտեֆակտներին:

2. Շարադրանքում Վանի թագավորության որոշ արքաների իշխանության տարթվերը ներկայացված են նոր թվագրմամբ, ինչը տարբերվում է վաղուց ընդունված հին ժամանակագրությունից: Չեմ գտնում, որ դա սխալ է, ավելին՝ կիսում եմ այդ մոտեցումը, սակայն կարծում եմ, որ նման պարագայում տողատակում անհրաժեշտ է նշել, թե որ մասնագետի թվագրությունն է հիմք ընդունվել աշխատանքի համար:

3. Ատենախոսության տարբեր հատվածներում և՛ աստուրական սեպագիր տեքստերի, և՛ ասորեստանյան արքայանունների ու հարստությունների ներկայացման ժամանակ խառն օգտագործվում է մեկ «աստուրական», մեկ «ասորեստանյան» որակումները: Կարծում ենք, որ սեպագրերի դեպքում միանշանակ է «աստուրական» եզրը, մինչդեռ արքաների ու հարստությունների պարագայում, մեր կարծիքով առավել ընդունելի է «ասորեստանյան»-ը:

4. Ատենախոսը Սարգուրի I-ի հոր՝ **'Lu-ti-ip-ti** անունը հայերեն տառադարձմամբ ներկայացվում է **«Լուիթպրի»** ձևով, թեև մի խումբ ուսումնասիրողներ ավելի հաճախ օգտագործում են **«Լուտիպրի»** գրելաձևը: Մինգամայն կողմ ենք ատենախոսի այս մոտեցմանը: Այս պարագայում հարց է ծագում, ինչու Վանի թագավորության հզոր արքա **'Ar-giš-ti-ti** (տարբերակ՝ **'Ar-gi-iš-ti**) անունը տառադարձվել է **«Արգիշտի»** ձևով: Չէ որ, մի շարք լեզվաբանների ու արևելագետների կարծիքով այդ անվան հիմքում ընկած է հնդեվրոպական վերականգնվող **“*arg-, *argos”** բառարմատը՝ որ նշանակում է «արծաթ, արծաթագույն, սպիտակ, փայլուն», ինչից հայերենում ունենք «արծաթ, արկաթ, երկաթ» բառարմատները՝ նախնական «սպիտակ, փայլուն մետաղ» իմաստով: Ըստ այդ, **'Ar-giš-ti** անունն էլ պետք է, որ նշանակած լինի «արծաթավուն, արծաթագույն, փայլուն»: Ուստի, մեր կարծիքով, Վանի տիրակալի սեպագիր անունը հայերենով ավելի պատշաճ է ներկայացնել **«Արգիշթի»** գրելաձևով:

5. Ատենախոսն աշխատանքում խոսելով Աշուրնաձիրպալ II-ի և Սալմանասար III-ի զահակալության շրջանում Զամուա երկրում բնակվող մի ցեղախմբի մասին, նրան նույն 21-րդ էջում մեկ անվանում է **«լուլու»**, մեկ **«լուլուբեյներ»**: Դիպլոմատի վերի հոսանքում և Զագրոսի լեռների շրջանում ապրող այդ ցեղերը սկսած մ.թ.ա. III հազ. վերջին քառորդից՝ Նարամ-Սուենի ժամանակներից (և հաջորդաբար՝ մ.թ.ա. II-I հազ.), սեպագիր տեքստերում հիշատակվում են **lullubi** և/կամ **lullubu** անվանական տարբերակներով: Բառացի այս բառարմատն ունեցել է «օտարական, օտարերկրացի, խորթ» և/կամ «թշնամի, ոսոխ, հակառակորդ» ընդհանրական իմաստները և այդպես էլ կիրառվել է ասորեստանցիների ու նրանց հարևան այլ հանրությունների (այդ թվում նաև ուրարտացիների) կողմից: **«Լուլուբեյներ»**-ն այդ ցեղանվան ռուսականացված օրինակն է՝ **«луллубен»**: Մեր կարծիքով, վերջիններիս անվան հայերեն տարբերակն ավելի ճիշտ կլինի ներկայացնել **«լուլուբեացիներ»** կամ **«լուլուբացիներ»** ձևով:

6. Կարծում ենք, որ աշխատանքն առավել ավարտուն ու ամբողջական կլիներ, եթե այն համալրված լիներ մի քանի քարտեզներով, որոնցում մի կողմից ներկայացվեին Կ. Ֆ. Լեման-Հաուպտի պատկերացումները Վանի թագավորության արքաների արշավանքների ուղիությունների մասին և, մյուս կողմից, դրանց այսօրվա (և/որ նյութերով ու տեքստերով համալրված) առավել ընդունելի երթուղիները:

